ՀԱՍՑԷ

M.ARCHAM
Poste Réstante
(Grèce) ATHENES

Ծանուցումները ընդունելի են վճարամանելի գիներով։

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՄԻՈՒԹԻՒՆԻ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ՊԱՅՄԱՆ

«Միութիւն»ի յաւելուածը ամէն տեղ հատով կը ծախուի։
Աթէնքի և շրջականներու համար, մէկ թիւը 10 Լէփթա։
Արտասահմանի համար, 15 սանթ.

ՀԱՒԱՔԱԾՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐՈՒ

Ա. ՏԱՐԻ | ԱԹԷՆՔ 1896 ՆՈՅԵՄԲԵՐ 25 | ԹԻՒ 1

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Կ'ուզենք քանի մը բառերով բացատրել մեր այս նոր հրատարակութեան նպատակը։

Յեղափոխական թերթ մը չէ ասիկայ, ո՛չ ալ որ և է կուսակցութեան մը պաշտօնական օրկանը։ Մեր նպատակն է օգտակար հետաքրքրական լրատու մ'ըլլալ բոլոր այն հայերուն համար որոնք աստին անդին ցրուած օտար լեզուի անտեղեակ, զուրկ մնացած են ամէն տեղեկութիւններէ, մանաւանդ այնպիսի ժամանակ մը ուր հայկական խնդիրը օրուան հարցը դարձած է կրկին Եւրոպայի և Ամերիկայի մէջ։ Շատ անգամ առիթ կ'ունենանք տեսնել, Աթէնքի և Պիրէոսի մէջ, խումբ խումբ հայրենակիցներ որոնք հետաքրքիր աչքերով բոլորուած են մարդու մը շուրջը որ յունական կամ ֆրանսական թերթ մը ձեռքը կը կարդայ ու կը թարգմանէ։ Այդ մարդոց շատը գիտէ հայերէն ընթերցում, բայց ո՞ւր պիտի կրնայ ճարել հայերէն թերթ մը որ գոհացնէ իրենց տաքաքրքրութիւնը։ Ընդհանրապէս առիթ կ'ունենայ կարդալու միայն յեղափոխական թերթեր, որոնք անշուշտ իրենց օգտակարութիւնը ունենալով հանդերձ չեն կարող բոլորովին գոհ ընել զինքը։ Նոյնմանաւանդ լուր կ'ուզէ. կ'ուզէ գիտնալ թէ Անգլիա ինչ կ'ընէ, թէ Ֆրանսա ինչ կ'ընէ, թէ ինչ կ'անցնի Պոլսոյ մէջ, թէ ինչ կը խօսի Կլատսթոն կամ Սալիսպուրի, թէ ո՞ւր են նաւատորմիղները ևն. ևն.։ Մեր հայրենակիցներու այդ փափաքը գոհացնելու կ'ուզենք մենք։

«Միութիւն»ի յաւելուածը տեղեկութիւններու թերթ մը պիտի ըլլայ միայն։

Պիտի պարունակէ Եւրոպական թերթերէ քաղուածքներ։

Տեղական թերթերէ քաղուածքներ։

Կ. Պոլսէն և Հայկական մեծ կեդրոններէն թղթակցութիւններ։

Ասոնցմէ դուրս պիտի պարունակէ նաև Հայկական հարցին վերաբերեալ զանազան յօդուածներ։

Վերջապէս պիտի ջանայ ամէն կերպով օգտակար և շահեկան ըլլալ պանդուխտ հայրենակիցներու։

Թէև առ այժմ «Միութիւն»ի յաւելուածը վիմագրութեամբ հրապարակ կ'ելլէ, բայց քիչ ատենէն, երբ մեր տպարանը աւելի կանոնաւոր վիճակի մը վերածուի, պիտի հրատարակուի մաքուր տպագրութեամբ։

Առ այժմ սոյն յաւելուածը կը հրատարակուի տասնըհինգ օրը մի անգամ։ Երբ գտնենք այն քաջալերութիւնը որուն կ'ակնկալենք մեր թերթը պիտի վերածենք շաբաթականի։

ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐ.

[illegible] ՄԸ.

Կ. Պոլսոյ թերթերը կը հրատարակեն հետևեալ պաշտօնականը։

«Կը տեսնուի որ վերջին օրերուն մէջը, Կ. Պոլսոյ Հայ հասարակութենէն խել մը մարդիկ — ընտանեօք և առանց ընտանեաց, գործ ունեցողներ և չունեցողներ — այսր անդր կը գաղթեն և խել մը թափառականներ ալ կերպով մը Անատոլուի կայսերական նահանգները կ'երթան և կ'ենթադրուի որ հակառակապէս [illegible]

անձինք խել մը առարկութիւն կը հնարեն կը հրատարակեն, այնպէս ցուցնելով թէ՝ երկրին մէջ իբր թէ անդորրութիւնն վրդոված է և այս է պատճառ գաղթականութեան. մինչդեռ օսմանեան պետութիւնն, իր հաստատութեան թուականէն իվեր իր ամէն կարգի հպատակաց պատուոյ, կենաց ու ընչից ապահովութեան համար ունեցած ուղղիղ ընթացքն ամէն ժամանակ պահպանելով՝ շնորհիւ խաղաղասիրական նորին կայսերական վեհափառութեան, կառավարութիւնն հոգ կը տանի՝ որպէսզի երկիրքի, մտահոգութեան և գաղթականութեան պատճառ եղող ո՛րևէ վիճակի տեղի չտրուի բնաւ:—Այսուամենայնիւ, անպատճառ գաղթել ուզողները, պարտաւոր են այլևս օսմանեան երկիրները չը վերադառնալու համար, երաշխաւորեալ և Դատրիարքարանէն վաւերացեալ գիր և իրենց լուսանկար պատկերներէն երկերկու հատ տալ յատկապէս կարգեալ յանձնաժողովին: Այսպիսեաց գաղթելու թոյլտուութիւն պիտի ըլլայ, տրուելիք անցագրին վրայ նշանակուելով թէ «Այսուհետև չպիտի վերադառնայ օսմանեան երկիրներն». և այսպիսիք՝ յանձնաժողովին տումարին, ուրիշ պատկանեալ պաշտօնատանց և Դատրիարքարանի մէջ արձանագրեալ պիտի տան թէ՝ օսմանեան հպատակութենէ ինկած են և այնուհետև երբէք չպիտի վերադառնան օսմանեան երկիրներն:—Իսկ առանց կայսերական կառավարութեան հրամանի գացողներն՝ սոյն յայտարարութեան թուականէն սկսեալ՝ 1½, և. եթէ ընդունելի արգելք մ՚ըլլայ՝ առ առաւելն 2 ամսոց մէջ չվերադառնան իրենց տեղէն, պարտաւոր են դիմել Եւրոպիոյ մէջ գտնուած օսմանեան դեսպանատանց, և ծանուցանել թէ չպիտի վերադառնան օսմանեան երկիրներն: Սոյն պայմանաժամն անցնելէ ետքը չը վերադարձողք պիտի հանուին օսմանեան հպատակութենէ, և ի՛նչ անուամբ ալ ըլլայ՝ Եւրոպա գացող և եւրոպական անցագրովք վերադարձող օսմանցի Հայոց օտար հպատակութեան դատը չի պիտի ճանչցուի, և օսմանեան երկրաց և ոչ մէկ կողմն չպիտի ընդունուին:—Այս որոշմունք քնաւ չպիտի պատկանին 20 տարի է իվեր գաղթող Հայոց, և մանաւանդ յեղափոխական յանձնաժողովոյ անդամոց ու խռովարարաց վերադարձին թոյլտուութիւն չը պիտի ըլլայ: Հանող խռովարարք իսկոյն պիտի ձերբակալուին և հանրային դատարանաց պիտի յանձնուին՝ կանոնական գործողութեանց համար: Նաև որովհետև յիշեալ խռովարարաց յարուցած յուզմանց կարգադրիչ բացում օտարական Հայեր կը գտնուին, և կառավարութիւնն ու ոստիկանութիւնն դժուարութիւն կը տեսնեն այդպիսիներն որոշելու համար, ուստի օտար հպատակութենէ օսմանեան հպատակութեան մտնել ուզողներուն ինդրոց ընդունելութեան համար տրամադրեալ կանոնական թոյլտուութիւնն չպիտի գործադրուի:—Այս կարգադրութիւնք որոշուած են նախարարաց ժողովոյ կողմանէ, և կայսերական հրամանաւ վաւերացեալ:»

27 Սեպտեմբեր 1896

Կ. Պոլսոյ Զարդը

Համակ Վառնայի մեր ընկերէն.

(Շարունակութիւն «Միութեան» 32 թիւին և վերջ.)

Մինչ ամբողջ Պոլիսը Հայ արիւնով ներկուած Հայ դիակներ լեռնանման կուտակուած էին, Բարթողիմէոս կառք նստած Սրբազան քէօշքի պալատը կը սուրար դահիճ Սուլթանէն հրահանգ ստանալու: Այդ գիշեր նոր նոր պատրաստութիւններ կը տեսնուէին միւս օրուան կոտորածի:

Հոս մեր տղմաթաթաւ բարթիկն ալ «Սիրելի ազգս» վերնագրով շրջաբերական մը խրմբագրել և տպել տալու զբաղած էր: Այդ աղտոտ թղթով նա հրաւէր կը կարդար հէգ Հայուն իրեն թաքստոցէն ելնել՝ յայտարարելով թէ «թիկնապահ մը գալով պատրիարքարան կատարեալ անդորրութիւն և ապահովութիւն տիրելը ծանուցած է. հետևաբար Հայ խանութպաններ ու ժողովուրդ դուրս ելնելով թող իրենց գործերովը զբաղին»: Մինչ անդին հաջիւ հորիզոնը ծերմկած էր թնդանօթաձիգ զօրքերու ջոկատներ ամբողջ Գալաթիոյ շուրջը պաշարեցին: Ճակատին արեգը չը ծագած քարափին մաքսի Սալոնի վարի դրան կողմը թրքական աղտոտ շորը ծածանիլ սկսաւ, և միանգամայն, Սիմէոնեան, քէօշէ օղլու խաներու պատուհաններ տանիսը և ամէն տեղ գնդակի բռնուիլ սկսան միւս կողմն խուժանէ մը մասը սկսեց դռները խորտակելու աշխատիլ. վերջապէս երկար աշխատելէ վերջ վայրենի պուռչտոցներու մէջ դռները բացուեցան. անմիջապէս վեր խուժեցին ու գտածներնին ոչխարի նման մորթելով սկսեցին փողոց նետել, թէ և հոդ Անգլ. դրօշ պարզուած էր և հոդ ապաստանած էին Խորսանացի երեք եղբայրներ Պիօն, Նշան և միւս եղբայրնին հէգ երիտասարդներ կը յուսային թէ անգլ. դրօշը զիրենք պիտի փրկէր, սակայն ինչպէս Սիմէոնեան խան այդպէս նաև այդտեղ բաշիբոզուկ սուլթանականներ արհամարելով այդ կեավուրի դրօշը զանոնք ևս մորթեցին, խեղճ Պիօնը տանիքէն ցատկելով փախաւ մինչև Աշիշիէ պահականոցը ու օձէն գթութիւն հայցեց հոն հասաւ ճիւաղ պաշտօնէին առնարգ սուրը ու մեռցուց զայն:

Երբ հոն գործերնին աւարտեցին ապիւրի մաղազաներու սկսեցին, որովհետև հայաբնակ վայրերը խիստ լաւ գիտէին. հոն ևս այդ վիճակին հասուցին ու ամէն տեղ պահպաններ թողլով կ՚անցնէին հորեր գործելու. կը դիտէինք ծոյէ վրան՝ հոն ալ էր արհաւիրքը, խումբ խումբ զինուոր ու խուժան մարթիններով՝ ռէվոլներով մակոյներու կէռերով կը գործէին, հոն ալ Պոլսոյ վիճակը շատ ուշատ ծանր էր, Էնկիթիմուրի գծուած զաւակը և Վասակայ վատոգի ու անարգ թոռ Բարթօն ձեռք ձեռքի տուած Հայութիւնը բնաջինջ ընելու կը ճգնէին, Եւրոպական օտար ազգաց հրապատակները դողալ սկսան, դեսպաններ ուէրենց թարգմաններ Սուլթանին դիմեցին որ նա հաշար ու մէկ թրքական խորամանկութեամբ, Հայ յեղափոխիչներու կը վերագրէր

այդ կոտորածներ թալաններ ևն։ Մուսթաֆա Թարգման մաքսիմ իր շոգեմակոյկով Պէշիքթաշի նաւամատոյց եկեղով պալատ երթալու միջոցին նաւին ոտքը նաւամատոյց դրած կը տեսնէ խումբ մը խուժան ուրոնց առջև մի քանի բոլիսներ Կամարցի դանակով Հայ մը կրպակէն դուրս քաշելով մեռցնելու զբաղած են կը մօտենայ բոլիսներէն մէկուն կը հարցնէ թէ «ինչու կը մեռցնէք այս մարդը», բայց ոստիկանը լրբաբար «ինչ՞ն է՞ վազիֆէն» կը պատասխանէ, նոյն ժամուն, Յոյն Դեսպանատան Թարգմանը կառքով պալատ գացած միջոցին ճիշդ մեծին յար և նման դէպքի մը կը հանդիպի Պէշիքթաշի, «Քէօփրիւ պաշի» ըսուած տեղը, որոնց Համիտիէով հանելէն պէս ջարդը Պէշիքթաշի մէջ մեծնալին կը դադրի, «կէս ժամուան մէջ 100 դիակներ թափելով գետին։ Երբ ես թուանշան չկրցի դնել մեր կորստեան, միայն ինքնին հաշուեցէք թէ Պէշիքթաշի մէջ, երբ կէս ժամը բաւական կ'ըլլայ 100 Հայ ջարդ տանելու, ապա 72 ժամ շարունակ ջարդ եղած տեղեր ինչեր տեղի ունեցան։

ԱԼԻՍԻ ՈՐԴԵԳԻՐԸ

Քաղուածք Եւրոպական Թերթերէ

Ինչպէս յայտնի է Միացեալ-Նահանգներու կառավարութիւնը կ'ուզէ պահականաւ մ'ունենալ Վոսփորի մէջ իր հպատակները պաշտպանելու համար. Թրքական կառավարութիւնը կ'ընդդիմանայ ասոր։ Այս մասին Ֆրանսական ՖԻԿԱՐՕ թերթը կը գրէ։

«Լրագիրները զանազան մեկնութիւններ կուտան այն հրահանգներու մասին զոր Միացեալ-Նահանգներու Կ. Պոլսոյ դեսպանը և ամերիկեան Պանքրոֆթ մարտանաւին հրամանատարը ընդունած են իրենց կառավարութենէն։ Այս մեկնութիւնները թէև բաւական հակասական են, այսուհանդերձ անկարելի չէ այդ զանազան մեկնութիւններու մէջ ճշմարիտ մասեր գտնել։»

«Այն արտօնութեան և նուիրակի պաշտօնէն որ առաջ եկաւ քրիստոնեաներու վերջին ջարդէն՝ զոր Թրքական կառավարութիւնը թող տուաւ որ կատարուի, եթէ երբէք ինք չը կազմեց, խիստ սաստիկ եղաւ Միացեալ-Նահանգներու մէջ, մանաւանդ ժողովրդեան բարձր դասին մէջ որ Եւրոպայի հետ հաստատուն յարաբերութիւններ ունի։ Ուրեմն զարմանալի չէ որ Վաշինկթոնի կառավարութիւնը Կ. Պոլսի դեսպան պ. Թերըլլի գծուշական և ազդու հրահանգներ տուած ըլլայ։ Գրեթէ հաստատուած իրողութիւն մ'է թէ պ. Թերըլլ որ Իզմիր կը գտնուէր, Պոլիս վերադառնալու համար այն մարտանաւը ընտրած է զոր կ'ուզէր Վոսփոր մտցնել իր հպատակները պաշտպանելու համար։»

«Ասոր համար ստիպուած է ընդրագիր մը հաստատել Դրան, որպէսզի պէտք եղած արտօնութիւնը տրուի Տարտանէլէն անցնելու համար այդ պատերազմական նաւը։ Որ և է պատճառաւ մը այդ արտօնութիւնը չէ տրուած և երեկ կը հաստատէին թէ Միացեալ-Նահանգներու նախագահ պ. Քլիվլէնտ այս յապաղումէն կամ ոչ-կամեցողութեան նշանէն վիրաւորուած հրամայած է պ. Թերըլլի և Պանքրոֆթի հրամանատարին բռնի անցնիլ Տարտանէլէն, ինչ որ անշուշտ առաջ պիտի բերէր թշնամական գործողութիւն մը և, իբր արդիւնք, աւելի ծանր խառնակութիւններ։»

«Այսօր կ'ըսեն թէ խնդիրը հոն չէ հասած։ Կ'ուզենք հաւատալ և շատ գոհ ենք, որովհետև տարօրինակ բան մը պիտի ըլլար երբ Եւրոպա՝ որ կ'ընկրկի Արևելեան խնդրին կարգադրութեան առջև, յանկարծ աննախատեսելի և անմիջական լուծում մը գար, շնորհիւ Միացեալ-Նահանգներու մէկ անակնկալ գործողութիւնը։ Բայց վերջապէս այդ դէպքը ճիշդ ատենին կուգայ ցոյց տալու համար թէ որչափ անյարիր է ցնցողական քաղաքականութիւնը որուն կը հետևին Եւրոպական տէրութիւնները և զոր ճարտար կը կարծեն, մինչդեռ բոլորովին անզգաստ է։ Յայտնի կը տեսնուի որ պէտք է միջոց մը գտնել Թուրքիան հանելու համար այն անիշխանական վիճակէն որ կրնայ արդարացնել Միացեալ-Նահանգներու տրամադրած միջամտութեան պէս, միջամտութիւններ։ Ինչու՞ համար ասոր չ'են աշխատիր ճիշդ այս միջոցիս ուր լուծումները կրնան տակաւին հաշտարար ու խաղաղական ըլլալ։»

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ
ԵՒ
Հրաժարականը

Կ. Պոլիս գտնուող բարձրաստիճան անձնաւորութիւն մը նամակով մը կու տայ հետևեալ տեղեկութիւնը՝ որուն բացառիկ կարևորութիւնը ամէն մարդ պիտի հասկնայ։

Սուլթանը տեսնելով որ անկարելի է հանդարտութիւնը և ապահովութիւնը վերահաստատել իր պետութեան մէջ և ուզելով ազատել իր երկիրը Մեծ-Տէրութիւններու անմիջական միջամտութեան հետևանքներէն, քանի քանի անգամ իր մօտ գտնուողներուն յայտներ է թէ գահէն հրաժարելու դիտաւորութիւն ունի։ Համիտ նոյնիսկ կ'ըսուի թէ ծածուկ կերպով իր այս դիտաւորութիւնը յայտներ է Ֆրանսական դեսպան պ. Քամպոնի, վերջին անգամ իրեն հետ ունեցած երկար տեսակցութեան միջոցին։

Համիտի երկրորդ քարտուղար Իզզէթ պէյ և պետական խորհրդի նախագահ Սայիտ փաշա՝ որոնք ամէնէն առաջ լուր էին Սուլթանին այս դիտաւորութիւնը, իրենց բոլոր ուժով ջանացեր են ետ կեցնել Համիտը իր այս որոշումէն։

Եթէ Սուլթանը հրաժարի, գահը պիտի բարձրանայ Ռէշատ էֆէնտի, որ մեզի գրուածներուն նայելով խիստ արժանաւոր իշխան մ'է։

(Լ'ԱՎԸՆԻՐ)

*
* *

«Սթանտար» կը ծանուցանէ թէ Տէրութիւններու մէջ համաձայնութիւն մը գոյացեր է Տարտանէլի նեղուցին վերաբերեալ դաշնագիրը բարեփոխելու համար։

*
* *

Հոկտեմբեր 20ին, Լոնտոն, Սէնթ-Ճէյմս Հոլի մէջ մեծ միթինկ մը գումարուեցաւ ի նպաստ Հայերուն, շատ ճառեր արտասանուեցան։

Քոչարկուած ստորագրութիւնները Եւրեպիոնական ժողովին պիտի ներկայացուին։

*

* *

"Մոռնինկ Բոսթ"-ը կը հաստատէ թէ Սուլթանը Ռուսական դեսպանին հետ ունեցած վերջին տեսակցութեան մէջ ցոյց է Անատոլուի բարենորոգումները անմիջապէս գործադրելու։

Հետեւեալ Պաշտօնական Յայտարարութիւնը հաղորդուած է մեզ հրատարակելու համար։

Գահիրէի Հնչակեան Մասնաճիւղն ի քառասունն գայթակղեալ մնաց, կը փութայ ծանուցանել իրեն համակրողներուն և Գաւառ. ժողովրդեան, թէ Կուսակցութեան ինամեայ գոյութենէն ի վեր ուրաշին անգամ ըլլալով այս տարի չորս մեր ծագաղ. կեղրոնական վարչութեան կողմէ այլեւայլ քաղաքներէ՝ ուր Հնչակեան Մասնաճիւղեր կայն լիս պաշտօնական պատգամաւորներ պահանջուած էին ի Լոնդոն գումարելի կուսակցութեան Ընդհ. Ժողովին ներկայ գտնուելու։ Հրաւիրեալ պատգամաւորներն Ամերիկայի, Եգիպտոսի, Ներպրաի, Դարկիստանի, Ռուկարիոյ, Մարսանիոյ, Կ. Պոլսոյ, Անատոլուի և Եւրոպական Դիրքի Հասարակաց, Սասունի և Մուշի, Մեծ Հայքի, Փոքր-Հայքի, Կիլիկիոյ և Հայաստանի, Ներքին և Սահմանագլուխ քաղաքներէն մասնաճիւղերու ներկայացուցիչներ փոխանորդութեամբ հասան Լոնդոն, և հոն միանալով կուսակցութեան յայնմ գործիչներու ներկայութեամբ, տեղական քարոզիչներու և ազգասիրներու, ինչպիսիներ քարոզիչներու և մէյլիսներու ծանօթ հիշատակներու հետ, 1896 Օգոստոս 8-ին ընդհ. ժողով գումարեցին, և հետաքրքիր ըրած նիստերէն շրջրջքին մէջ յետ երկարատեւ քննակցութեան պաշտօնապէս ըրին զգարուն և տիկին Հնչակեանց վարչութիւնն կեդրոնին։ Նոյնպէս պաշտօնապէս հաղորդեցին իրենց հետեւողական գործունէութիւնը։ Բայց ցաւ է մեզ յիշել թէ նոյն պարոնը ու տիկինը չանսացել կուսակցութեան Ընդհ. ժողովոյ հրաւէրն, և իրենց ցաւոտը հաստատելով կարգ մը մարդիկ, որոնք թարոյական ասելի նիւթական պատճառներով իրենց կապուած են, սկսած են այլեւայլ տեղեր շրջաբերականներ սարքել և նոր "Հնչակ" հրատարակել, իրենց ապօրինի ընթացքը քաւաղուելու որպէսզի կարենան թշուառ հայ ժողովրդին կարգ մը հետեւներ ի նորոյս գրաւել և ասանկով իրենց ազգակործանարար, միապետական ընթացքը շարունակել։

Յեղուցոյս մասնաճիւղը սոյն ներկայ յայտարարութեամբ կը փութայ ծանուցանել ամէն ազգայնոց որ հաւատ չընծայեն այդ տեսակ եսամոլ և փառասէր անձերու, և իրենց ուսումնական շադրութիւնը դարձնեն մեր այժմեան կեդրոնին որ ըստ ամենայնի վստահելի և երկրին հանգամանաց ու տիրութեանց ծանօթ անձնաւորութիւններէ կը բաղկանայ։ Ուրախ ենք յայտարարելու թէ յետ երկու հանրաժողովի կեդրոնական հետեւորդներն "Հնչակ"-ն "Դրոշակ" հետեւեալ միացման գծի վրայ են և համերաշխ գործունեութեամբ պիտի յաջողին ազգ ասկալի հարուածներ հանրութեան թշնամոյն։ Հետեւաբար անմեղ անհատ՝ ի սէր ազգային վերածնունդի պարտի միմեանց փարելով աշխատիլ անկեղծ և փորձառու Եռաջնորդներու։ Զի միայն այս պիտի ըլլայ մեր ազատութեան ճամբան։ կեցցէ՞ Հայութիւն, կեցցէ՞ յեղափոխութիւն։

Ի Գիմաց վարչական Մարմնոյ։

1896 Հոկտ. 16 Գահիրէ։ Կնիք

Մասնաճիւղ Հնչակեան
Կուսակցութեան, Գահիրէ։

Գաւառաբժան խմբագիր "Մշոյ"-ն աջգաջգան լրագրոյ. կը խնդրենք որ ներկայ հանրագրութիւնս յառաջիկայ թուոյդ հրատարակել հաճիք։

Գաւառաբժան Սորպիոնի վարչութիւն Հնչակեան Հայ յեղ. կուս. սանձարձակ Հնչակի վերջի թիւը, ստուգեցինք այն ապառաջնորդութիւնը թէ Սաւուտ Ճաղարբեկեան և իր Ճիլիին պատգամաւորներն կուսակցութենէ, անհունապէս ուրախ եղաւ տեսնելու Հնչ. և նոր հայ գաղթականութիւնը։

Իսկ մեզ ալ զարմանքիս երբ տեսանք հրապարակի վրայ Ճաղարբեկեանցի կողմէ հրատարակել նոր "Հնչակ"-մը, ցաւոտ սրտի կը տեսնք որ Նազարբեկեանի այս սասլման ընթացքին չէր յուսացուեր։

Ուստի ըստ փափաքանաց քաղաքացիներու ազգայնոց, կը փութանք ներկայ հանրագրով գրելով խնդրագրութեանց, որ յարատեւէր մեր կուսակցութեան դեռնարկի մէջ առանց վնասանելու։ Գիտնալով որ ամէն անձնք, որք հնչակեան կուսակցութեան անդամ կամ համակրողներ իրենց արիւնը և դրամը գրած են հնչակեան ազգասէր վարչութեան տրամադրութեան տակ։

Ինչ բողոքենք Նազարբեկեանցի դէմ իրեն ազգային մի դաւաճանի՝ որ իւր անձի փառասիրման և ապագայ սին յոյսերով, ամբողջ ազգի կեանքի հետ կը խաղայ, այսպիսի ծգնաժամի մը առեն։ Կը բողոքենք իւր ըրած վիրաբ յայտարարութեան դէմ, որով կը յանդգնիր, անուանարկել ՀԵՅԹՈՒՆի քաջ հերոսներն։

Ու այսու յայտարարութեամբ կը դիմենք ընդհ. հայութեան, զգուշացնելու զինքը նաս զարպէկեանցի դաւերին։ (Շարունակելի.)

Վերջին լուրեր

Հայկական ինքնավարութիւն

Լոնդոն Տոկտ. 22։

"Տեյլի Նիւզ"-ը կը հաստատէ թէ. Մեծ-Տէրութիւնները Հայկական ինքնավարութիւն մը առաջարկած են, իրենց ներշնչաւորութեամբ ու Սուլթանի կառավարութեան հակողութեամբ։

Բարիզ Ներքաղաքի գործոց Նախարար Գ. Լանդրէ, հայկական խնդրի նկատմամբ եղած հարցին, պիտի պատասխանէ այսօր Ներկայացեալ ժողովին մէջ։

Ցեղի սղութեան համար. մեր ներկայացուցիչ անունները, պիտի հրատարակենք յաջորդ թուով։

"Պրութիւնի յաջողութիւն" այս առաջին թիւրը, մի քիչ անկանոն եղաւ, որուն համար մեր ընթերցողներուն ներողամտութիւնը կը խնդրենք։

Խմբագրութիւն "Պրութիւն"-ի